



Վ Ճ Ի Ռ

Հ Ա Ն ՈՒ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ը Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը, հետևյալ կազմով՝
Մախազախության մ. դատավոր
Ս. Ավվերդյանի
Քարտուղարության մ. Սարգսյանի
Մասնակցության մ. հայցվոր
Ա. Սարգսյանի
պատասխանող՝

ԼՈՐՈՒ ԿՐԹԻ
ԱՌԱՋԻՆ ԱՍՏՈՒՄ ԴԵՏԱՐԱՆ
133
Գ.Ք.

Ա. Սարգսյանի
«Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Վանաձորի N 8
միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներ՝
Կ. Ստեփանյանի, Գ. Մատինյանի և
Ա. Էվոյանի

2006թ. ապրիլի 26-ին դատարանում, դռնբաց դատական նիստում, քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Սուսաննա Արամյանի Սարգսյանի (քննության վայրի հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայաբյան 1-ին նրբ., տուն 13, անձնագիր՝ AE 0622206 տրված՝ 31.05.2000թ., 018, ծնված՝ 12.07.1960թ., սոցիալական քարտի համարը՝ 6207600053), ընդդեմ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի N 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ անկախ կազմակերպության (գտնվելու վայրի հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մաշտոցի 1, պետական գրանցման վկայականի համարը՝ 03 Ա 056771, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 06910025)՝ «Պատասխանողի 25.02.2005թ. թիվ 2, 18.03.2005թ. թիվ 5 և 24.03.2005թ. թիվ 6 հրամաններն անվավեր ճանաչելու, պատասխանողին՝ իր կողմից՝ 18.03.2005թ. արձակած հրամանին օրինական ձևակերպում տալուն պարտադրելու, ինձ իմ նախկին կամ համարժեք այլ աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարի պահանջի մասին»:

Դատաքննության մ. դատարանը պարզեց հետևյալը:

Հայցվոր՝ Ա. Սարգսյանը դիմելով դատարան հայտնել է, որ 1988թ.-ից աշխատում է Վանաձորի թիվ 8 միջնակարգ դպրոցում (նշտուհետ՝ դպրոց), որպես ինֆորմատիկայի ուսուցչուհի, իսկ 2004թ.-ի փետրվարից նաև համակարգչային կաբինետի օպերատոր: Դպրոցի տնօրենը՝ 01.09.2004թ.-ին արձակած՝ թիվ 58 և 59 հրամաններով իրեն ազատել է նշված երկու աշխատանքներից՝ թույլ տալով ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ: Այդ կապակցությամբ դիմել է ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարան, որի՝ 13.10.2004թ.-ի վճռով բավարարվել է իր պահանջը՝ նախկին աշխատանքում վերականգնվելու և հարկադիր պարապուրդի գումարը վճարելու մասին: Դպրոցի տնօրենի բողոքի հիման վրա ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը՝ 11.01.2005թ.-ի վճռով նույնպես բավարարել է իր հայցը: Վճռվել է. «Հայցը բավարարել: Սուսաննա Սարգսյանին վերականգնել իր նախկին աշխատանքում՝ Վանաձորի թիվ 8 միջնակարգ դպրոցում, որպես ինֆորմատիկայի ուսուցիչ և 1,5 դրույքով որպես համակարգչային օպերատոր...»: Նշված վճռի դեմ դպրոցի տնօրենը բողոք է ներել ՀՀ վճռաբեկ դատարան, որի՝ 11.02.2005թ. որոշմամբ ՀՀ քաղաքացիական գործերով

Ստեփանյանի
11.02.2005թ.

վերաքննիչ դատարանի՝ 11.01.2005թ.-ի վճիռը թողնվել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքն առանց բավարարման և վերաքննիչ դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ: Մինչև աշխատանքից ազատվելը աշխատել է ինֆորմատիկայի ուսուցիչ՝ 10 ժամ ծանրաբեռնվածությամբ և համակարգչային կաբինետի օպերատոր՝ 0,5 դրույքաչափով: Դպրոցի տնօրենը հրաժարվել է կատարել դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը և 19.02.2005թ. կազմել է արձանագրություն՝ նշելով. «... տեխնիկապես հնարավոր չէ կատարել դատարանի վճիռը և Սուսաննա Սարգսյանին վերականգնել նախկին աշխատանքին համարժեք աշխատանքում»: Դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա 33 ԱՆ ԴԱԳԿ ծառայության Վանաձորի տարածքային ստորաբաժանման հարկադիր կատարողի կողմից՝ 16.03.2005թ. կայացված՝ կատարողական վարույթ հարուցելու և պարտապահին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին որոշումների հիման վրա, դպրոցի տնօրենի՝ 18.03.2005թ. թիվ 5 հրամանով իրեն վերականգնել են նույն դպրոցում որպես համակարգչային օպերատոր 0,5 դրույքով և ինֆորմատիկայի ուսուցիչ 10 ժամ ընդհանուր ծանրաբեռնվածությամբ, որից 4 ժամը ինֆորմատիկա, 6 ժամը պատմության դասաժամ: Ինքը չի համաձայնվել իրեն պատմության 6 ժամ տրամադրելու հանգամանքին, որի մասին գրել է նույն հրամանի քաղվածքի վրա, քանի որ ինքը պատմություն դասավանդելու իրավունք և համապատասխան կրթություն չունի: Նշված հրամանի հիման վրա՝ 33 ԱՆ ԴԱԳԿ ծառայության Վանաձորի տարածքային ստորաբաժանման հարկադիր կատարողի՝ 23.03.2005թ. որոշմամբ կատարողական թերթի պահանջը փաստացի կատարված լինելու կապակցությամբ կատարողական վարույթը կարճվել է: Դպրոցի տնօրենը՝ 24.03.2005թ. արձակել է թիվ 6 հրամանը, որը հաջորդել է իր աշխատանքում վերականգնելու թիվ 5 հրամանին, որով իրեն ազատել է աշխատանքից իբր առանց հարգելի պատճառների 2005թ. մարտի 1-ից մինչև մարտի 18-ը ընկած ժամանակահատվածում աշխատանքի չներկայանալու՝ գործալքության համար, ղեկավարվելով 33 աշխատանքային օրենսգրքի 36 հոդվածի 4-րդ կետով: ԴԱԳԿ ծառայության Վանաձորի տարածքային ստորաբաժանման հարկադիր կատարողի որոշումը՝ պարտապահին որոշակի գործողություններ կատարելու պարտավորեցնելու մասին, կայացվել է 16.03.2005թ.-ին, իսկ դրան հաջորդող հրամանը՝ աշխատանքում վերականգնելու մասին, տրվել է՝ 18.03.2005թ.-ին: Այդ դեպքում, երբ ինքը նախ աշխատանքում վերականգնվել է 18.03.2005թ.-ին, չէր կարող աշխատանքի գնալ 2005թ.-ի մարտից 18-ը ընկած ժամանակահատվածում:

Հայցվոր՝ Ս. Սարգսյանը պնդելով պահանջը դատարանին խնդրեց՝ անվավեր ճանաչել Դատարանի տնօրենի՝ 25.02.2005թ. թիվ 2, 18.03.2005թ. թիվ 5 և 24.03.2005թ. թիվ 6 հրամանները, պարտադիր կատարել Դպրոցի տնօրենին՝ օրինական ձևակերպում տալ իր կողմից՝ 18.03.2005թ. արձակած հրամանի վերականգնել իրեն իր նախկին կամ համարժեք այլ աշխատանքում և վճարել հարկադիր պարտավորողի գումարը:

Պատասխանողի ներկայացուցիչ՝ Դպրոցի տնօրեն՝ Կ. Ստեփանյանն առարկեց հայցի դատարանին հայտնեց, որ հայցվոր՝ Ս. Սարգսյանը Դպրոցում աշխատանքի է ընդունվել 19 սեպտեմբերի 1-ին, որպես ինֆորմատիկայի ուսուցիչ: Դպրոցին 2002թ. սեպտեմբերին հատկացված համակարգչային օպերատորի 0,5 դրույք և 09.10.2002թ.-ին, որպես համակարգչային օպերատոր աշխատանքի է ընդունվել Արփիմե Դանիելյանը: 16.02.2004թ.-ին վերջինս ազատվել է աշխատանքից՝ համակարգչային օպերատորի 0,5 դրույքը տրվել է Ս. Սարգսյանին: Ա. Դանիելյանը դիմել է դատարանի՝ 10.06.2004թ. վճռով վերականգնվել է իր նախկին աշխատանքում: Վճռի հիման վրա տրվել է Դպրոցի 28.08.2004թ. թիվ 50 հրամանը, որով Ա. Դանիելյանը վերականգնվել է Դպրոցում որպես դրույքով համակարգչային օպերատոր: Հիմք ընդունելով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի


ԼՈՍՈՍԻ ԿՈՄԻՏԵ
ԱՌԱՋԻՆՏԻՆԵՆԻ
13411
ՍԵՎԵՐՆԵՐԻ 1-Ի ՔԻՎ 59

10.06.2004թ. վճիռը և Ղարգոյանի 2004 թ. 1-ին հիվ 50 հրամանը, 2004թ. սեպտեմբերի 1-ի թիվ 59 հրամանով, ՀՀ աշխատանքի գործառնության 36 հոդվածի 6-րդ կետով Ս. Սարգսյանն ազատվել է 0,5 դրույքով համակարգչային տեխնոլոգիայի աշխատանքից: Հաստիքների և աշխատողների թվի կրճատման կապակցությամբ հրապարակված 2004թ. սեպտեմբերի 1-ի թիվ 58 հրամանով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Ս. Սարգսյանն ազատվել է աշխատանքից որպես ինֆորմատիկայի ոլորտի զինվոր, որովհետև 2004-2005 ուստարվա տարիֆիկացիայով ինֆորմատիկա առարկայի ոլորտից հանվել է ընդամենը 4 դասաժամ շարաթական ծանրաբեռնվածություն, ինչը վերջնականում տվյալ առարկայից առանձին ուսուցիչ ունենալու համար: Ս. Սարգսյանն ազատվել է աշխատանքից որպես ուսուցիչ նոր տարիֆիկացիայի գործողության պայմաններում հրավիրված 2004-2005 ուստարում Ղարգոյան ուներ ընդամենը 4 դասաժամ, հետևաբար, նա աշխատանքից ազատվել է ոչ թե 10 դասաժամից, այլ 4: Ս. Սարգսյանը դիմել է դատարան և, ի վերջո, ՀՀ վճարքերի օրենսդրության քաղաքացիական և տնտեսական գործերի պալատը՝ 2005թ. փետրվարի 11-ի որոշմամբ հրապարակել է թողել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ 11.01.2005թ. վճիռը և Ղարգոյանի 2004 թ. 1-ին հիվ 50 հրամանով մասին՝ 20.01.2005թ. որոշումը, ըստ որոնց՝ Ս. Սարգսյանը վերականգնվել է Ղարգոյան իր նախկին աշխատանքին համարժեք աշխատանքում: Քանի որ Ս. Սարգսյանի նախկին աշխատանքին համարժեք աշխատանք Ղարգոյան չի եղել, որով էլ պայմանավորված հնարավոր չի եղել կատարել վճիռը, 2005թ. փետրվարի 19-ին կազմվել է համապատասխան արձանագրություն: Դժգոհելով վերոհիշյալ արձանագրությունից Ս. Սարգսյանը բողոքել է Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետին, որն էլ, անտեսելով՝ 19.02.2005թ. արձանագրությունը մեջ բերված հիմնավորված պատճառաբանությունը, բանավոր կարգադրել է Ղարգոյան ուսուցիչի կատարել օրինական ուժի մեջ մտած վճիռը: Այս պայմաններում, չունենալով անհրաժեշտ հնարավորություններ և ստիպված անտեսելով՝ 19.02.2005թ. արձանագրության մեջ նշված հանգամանքները, Ղարգոյան կամուրջի կատարել է դատարանի վճիռը և կրթության վարչության պետի բանավոր կարգադրությունը՝ 2005թ. փետրվարի 25-ին արձակել է թիվ 2 հրամանը, որով 2005թ. փետրվարի 25-ից Ս. Սարգսյանը վերականգնվել է իր նախկին աշխատանքում Ղարգոյան 0,5 դրույքով որպես համակարգչային օպերատոր և ինֆորմատիկայի ուսուցիչ՝ 4 ժամով: Նույն օրը՝ 2005թ. փետրվարի 25-ին առավոտյան ժամը 9-ին Ս. Սարգսյանը ներկայացել է Ղարգոյան, նրան համակարգչային դասասենյակում ներկայացվել է աշխատանքի վերականգնման՝ 25.02.2005թ. թիվ 2 հրամանի քաղվածքը, իրեն հանձնվող սարքավորումների արձանագրությունը, համակարգչային սենյակի պահպանման պատասխանատվության պայմանագիրը: Ս. Սարգսյանը հրաժարվել է վերցնել հրամանի քաղվածքը, ստորագրել արձանագրությունը և պայմանագիրը և անցնել աշխատանքի: Նա Ղարգոյան ներկայացրել է իր ունեցած պահանջները և գնացել տուն ասելով, որ կվերադառնա, երբ մեկ առ մեկ կատարվեն ներկայացված բոլոր պահանջները: Ներկա գտնվող աշխատողների կողմից անմիջապես կազմվել և ստորագրվել է համապատասխան արձանագրություն: Ղարգոյան տնօրենը, կատարվածի մասին տեղեկացրել է Լոռու մարզպետարանի կրթության վարչության պետին: 2005թ. փետրվարի 25-ից մինչև մարտի 18-ը Ս. Սարգսյանը անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի, անտեսելով փոխտնօրենի՝ Գ. Մատինյանի գանգերը, վարչության պետի տեղեկացնելը աշխատանքի տեղում վերականգնվելու մասին, Ղարգոյան տնօրենի պաշտոնական գրությունը, որով Ս. Սարգսյանը կրկին տեղեկացվում էր աշխատանքում վերականգնվելու և աշխատանքային օրվա տևողության մասին: Ս. Սարգսյանի կողմից բաց թողնված յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն, կրթության վարչության պետին

ներկայացվել են Դպրոցի տնօրենի զեկուցագրերը: 18.03.2005թ.-ին Ս. Սարգսյանը Դպրոց է ներկայացել Լոռու մարզի ՂԱԳԿ բաժնի հարկադիր կատարողների հետ, իբր աշխատանքում վերականգնվելու համար: ՂԱԳԿ բաժնի հարկադիր կատարողները, ժանոթանալով Ս. Սարգսյանի աշխատանքում վերականգնվելու՝ 25.02.2005թ. թիվ 2 հրամանին, Դպրոցի տնօրենից միայն պահանջել են Ս. Սարգսյանին աշխատանքի մեջ համարել՝ 11.02.2005թ.-ից և տալ լրացուցիչ 6 ժամ ցանկացած առարկայից՝ 10 ժամ ժամաքանակը լրացնելու համար: Չընդունելով Դպրոցի տնօրենի բացատրությունները, որ 2004-2005թթ. ուսարվա տարիֆիկացիայով Դպրոցն ունի ընդամենը 4 ժամ ինֆորմատիկա, և որ Ս. Սարգսյանը աշխատանքից որպես ինֆորմատիկայի ուսուցիչ կրճատվել է ոչ թե 10 ժամ, այլ 4 ժամ ժանդաբանության, քանի որ նրա ազատման հրամանը տրվել է 2004թ. սեպտեմբերի 1-ի՝ նոր տարիֆիկացիայի գործողության առաջին աշխատանքային օրը, ոչ թե օգոստոսի 31-ին, երբ դեռ գործում էր ինքն տարիֆիկացիան, որով Ս. Սարգսյանը ուներ 10 ժամ: Ի լրումն՝ 25.02.2005թ. թիվ 2 հրամանի, տրվել է՝ 18.03.2005թ. թիվ 5 հրամանը, որով Ս. Սարգսյանը աշխատանքի մեջ է համարվել 2005թ. փետրվարի 11-ից և բացի 4 ժամ ինֆորմատիկա առարկայից նրան հատկացվել է 6 ժամ «պատմություն» առարկայից: Ի վերջո Ս. Սարգսյանն աշխատանքում վերականգնված է համարվում ոչ թե 18.03.2005թ. թիվ 5 հրամանով, այլ՝ 25.02.2005թ. թիվ 2 հրամանով: Իր տրամադրության տակ ունենալով աշխատանքում վերականգնվելու մասին 25.02.2005թ. թիվ 2 հրամանի քաղվածքը և Դպրոցի տնօրենի՝ 28.02.2005թ. պաշտոնական գրությամբ Ս. Սարգսյանն առանց հարգելի պատճառների չի ներկայացել աշխատանքի և Դպրոցը գործալքության համար հարկադրված է եղել նրան ազատել աշխատանքից՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդվածի 4-րդ կետով: Ս. Սարգսյանը Դպրոցում պետք է կատարեր 2 տարբեր, ինքնուրույն, միմյանց հետ չկապված աշխատանքներ, որոնցից մեկը՝ 0,5 դրույքով համակարգչային օպերատոր աշխատանքը պահանջում էր ամենօրյա 3,5-ժամյա պարտադիր ներկայություն աշխատատեղում անկախ նույն ամօր, որպես ուսուցիչ դասաժամեր ունենալու հանգամանքից: Ուստի, եթե Սարգսյանը համաձայն չէր իրեն հատկացված դասաժամերի քանակի հետ, այնուամենայնիվ, աշխատանքից, նա պարտավոր էր պատշաճ կերպով ներկայանալ աշխատանքի և աշխատել համակարգչային օպերատոր, շաբաթվա 6 օրը, օրական 3,5 ժամ տևողությամբ: Նա չի կատարել օպերատորի, ոչ էլ ուսուցչի աշխատանքները: Այսպիսով, Ս. Սարգսյանն աշխատանքից ազատվելու աշխատանքային կարգապահությունը խախտելու, այսինքն՝ առանց հարգելի պատճառների գործալքության համար, օրինական կարգով:

Պատասխանողի ներկայացուցիչ՝ Դպրոցի տնօրեն՝ Կ. Ստեփանյանը խնդրեց դատարանից մերժել հայցը, քանի որ այն ակնհայտ անհիմն է:

Պատասխանողի ներկայացուցիչ՝ Դպրոցի փոխտնօրեն՝ Գ. Մատինյանն առարկեց հայցը դատարանին հայտնեց, որ աշխատանքում վերականգնվելուց հետո՝ Ս. Սարգսյանը փետրվարի 25-ին, լինելով դպրոցում, հրաժարվել է մտնել իրեն տրամադրված համակարգչային կաբինետը: 2005թ. փետրվարի 26-ին՝ Ս. Սարգսյանը չի ներկայացել դպրոց՝ 9-րդ «բ» դասարանի ինֆորմատիկայի դասաժամը պարապելու: Քանի որ Ս. Սարգսյանի վերականգնվելուց հետո Դպրոցում Գարությունյանից վերցված էր համապատասխան ժամերը, դասապրոցեսը չխախտելու նպատակով Ս. Սարգսյանին պարզելու բացակայության պատճառը, սակայն նա հրաժարվել է Դպրոց և մինչև մարտի 19-ը այլևս Դպրոց չի ներկայացել: Այդ մասին բազմիցս տեղյակ էր Դպրոցի տնօրենին և գրել համապատասխան զեկուցագրեր: 2005թ. մարտի 19-ին Ս. Սարգսյանը մտնելու աշխատանքի, սակայն, հրաժարվել է աշխատել, որպես համակարգչային օպերատոր և համակարգչային կաբինետը, պարապել է միայն ինֆորմատիկայի երեք դասաժամերը մեկ:



ընկած ժամանակահատվածում: Պատժամը պարապելուց հետո, Ս. Սարգսյանը աշխատանքային մնացած ժամերը նստել է ուսուցչանոցում ուսուցիչների հետ միասին: Ս. Սարգսյանից բազմիցս պահանջվել է գրավոր բացատրություն համակարգչային կաբինետը չընդունելու համար, բայց նա միայն ներկայացրել է իր հերթական պահանջները: Միաժամանակ պահանջվել է տալ գրավոր բացատրություն, թե փետրվարի 25-ից մինչև մարտի 19-ը ընկած ժամանակահատվածում Ս. Սարգսյանը ինչու չի ներկայացել աշխատանքի, սակայն նա ինչպես տնօրենին, այնպես էլ իրեն գրավոր բացատրություն չի տվել, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:


Պատասխանողի ներկայացուցիչ՝ Դպրոցի փոխտնօրեն՝ Գ. Սատինյանը խնդրեց դատարանին մերժել հայցը, քանի որ այն հիմնավոր չէ:

Լսելով կողմերի բացատրությունները, հետազոտելով ներկայացված գրավոր ապացույցները, և դրանցից յուրաքանչյուրը գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանը եկավ այն եզրահանգման, որ հայցը ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ:

Հայցվոր՝ Ս. Սարգսյանն աշխատել է Վանաձորի թիվ 8 միջնակարգ դպրոցում, որպես ինֆորմատիկայի ուսուցչուհի և 0,5 դրույքով, որպես համակարգչային օպերատոր: Դպրոցի տնօրենը՝ 2004թ. սեպտեմբերի 1-ին, թիվ 58 և 59 հրամաններով հայցվորին ազատել է նշված երկու աշխատանքներից, որի կապակցությամբ վերջինս դիմել է դատարան: 13.10.2004թ.-ին ՀՀ Լոռու շրջի առաջին ատյանի դատարանը վճռել է Ս. Սարգսյանին վերականգնել իր նախկին աշխատանքում՝ Վանաձորի թիվ 8 միջնակարգ դպրոցում, որպես ինֆորմատիկայի ուսուցիչ և 0,5 դրույքով որպես համակարգչային օպերատոր: Դպրոցի տնօրենի վերաքննիչ բողոքի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը՝ 11.01.2005թ.-ի վճռով նույնպես բավարարել է Ս. Սարգսյանի հայցը և վճռել է Ս. Սարգսյանին վերականգնել իր նախկին աշխատանքում՝ Վանաձորի թիվ 8 միջնակարգ դպրոցում, որպես ինֆորմատիկայի ուսուցիչ և 0,5 դրույքով որպես համակարգչային օպերատոր: Նշված վճռի դեմ Դպրոցի տնօրենի վճռաբեկ բողոքի հիման վրա՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերի պալատի՝ 11.02.2005թ. որոշմամբ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ 11.01.2005թ.-ի վճիռը թողնվել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքն առանց բավարարման, որի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վերոնշյալ վճիռը մտել է օրինական ուժի մեջ: Դպրոցի տնօրենը հրաժարվել է կատարել դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը և 2005թ. փետրվարի 19-ին Դպրոցի աշխատակիցների հետ կազմել է արձանագրություն այն մասին, որ տեխնիկայես հնարավոր չէ կատարել դատարանի վճիռը և Ս. Սարգսյանին վերականգնել նախկին աշխատանքին համարժեք աշխատանքում: Դժգոհելով վճիռից, հիշյալ արձանագրությունից Ս. Սարգսյանը բողոքել է Լոռու մարզպետին և մարզպետարանի կրթության վարչության պետին, որոնք բանավոր կարգադրել են Դպրոցի տնօրենին՝ կատարել դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը: 2005թ. փետրվարի 25-ին Դպրոցի տնօրենն արձակել է թիվ 2 հրամանը, որով 2005թ. փետրվարի 25-ից Ս. Սարգսյանը վերականգնվել է իր նախկին աշխատանքում՝ Դպրոցում որպես ինֆորմատիկայի ուսուցիչ 4 ժամով և 0,5 դրույքով որպես համակարգչային օպերատոր:

Դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Դպրոցի տնօրենի՝ 2005թ. փետրվարի 25-ի թիվ 2 հրամանը չի համապատասխանում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի պահանջներին, քանի որ նշված վճիռն օրինական ուժի մեջ է մտել 2005թ. փետրվարի 19-ին և հենց այդ օրվանից էլ Ս. Սարգսյանը պետք է վերականգնվեր իր նախկին աշխատանքում, սակայն հիշյալ հրամանով նա վերականգնվել է փետրվարի 25-ից: Ավելին, մինչև աշխատանքի ազատվելը,

135 11
Գ.Ք.



այն է՝ մինչև 2004թ. սեպտեմբերի 1-ը, այսինքն նախորդ ուսումնական տարում, Ս. Սարգսյանը ունեցել է 10 ժամ ծանրաբեռնվածություն ինֆորմատիկա առարկայից, դատարանի և նա վերականգնվել է իր նախկին աշխատանքում, որը ենթադրում է, որ վերականգնման արդյունքում նա պետք է ապահովվեր նախկին 10 ժամ ծանրաբեռնվածությամբ, այնինչ, վերը նշված հրաման Սարգսյանին տրվել է ինֆորմատիկա առարկայից 4 ժամ:

Ս. Սարգսյանին ներկայացվել է աշխատանքի վերականգնման՝ 25.02.2005թ. թիվ 2 հրաջարվածքը, իրեն հանձնվող սարքավորումների արձանագրությունը, համակարգչային սեւ պահպանման սարքավորումների արձանագրությունը և համակարգչային սենյակի պահպան պատասխանատվության պայմանագիրը: Ս. Սարգսյանը հրաժարվել է վերցնել հրամանի քաղվ ստորագրել արձանագրությունը և պայմանագիրը և անցնել աշխատանքի: Նա, համաձայն չլի Դպրոցի տնօրենի՝ 2005թ. փետրվարի 25-ի հրամանին, չի ներկայացել աշխատանքի՝ պահան անբողջությամբ կատարել վճիռը, դիմել է տարբեր ատյանների, այդ թվում՝ ԳԳ ԱՆ ԴԱԳԿ ծառայո Լուռու մարզային ստորաբաժանմանը՝ պահանջելով հարկադիր կարգով կատարել դատարանի և Դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա՝ ԳԳ ԱՆ ԴԱԳԿ ծառայության մարզային ստորաբաժանման հարկադիր կատարողի կողմից՝ 16.03.2005թ. կայա կատարողական վարույթ հարուցելու և պարտապանին որոշակի գործողություններ կատար պարտավորեցնելու մասին որոշումների հիման վրա, Դպրոցի տնօրենի՝ 18.03.2005թ. թիվ 5 հրա համաձայն՝ Ս. Սարգսյանն աշխատանքի մեջ է համարվել 2005թ. փետրվարի 11-ից, ինչի առարկայից 4 ժամ, պատմություն 6 ժամ, ընդամենը 10 ժամ ծանրաբեռնվածությամբ: Հիշյալ հրա հիման վրա, կատարողական թերթի պահանջը փաստացի կատարված լինելու հիմքով, հար կատարողի՝ 23.03.2005թ. որոշմամբ կատարողական վարույթը կարճվել է: Հետո օրը՝ 24.03.2 ին, Դպրոցի տնօրենն արձակել է թիվ 6 հրամանը, որով Ս. Սարգսյանն ազատվել է աշխատա առանց հարգելի պատճառների՝ 2005թ. մարտի 1-ից մինչև մարտի 18-ը աշխատանքի չներկայա գործաւթության համար, ԳԳ աշխատանքային օրենսգրքի 36 հոդվածի 4-րդ կետի համաձայն:

Դատարանը գտնում է, որ Դպրոցի տնօրենի՝ 24.03.2005թ.-ի թիվ 6 հրամանը հիմնավորվ քանի որ Ս. Սարգսյանին աշխատանքում վերականգնելու մասին դատարանի օրինական ու մտած վճիռը, ըստ էության փաստացի կատարվել է Դպրոցի տնօրենի՝ 18.03.2005թ. թիվ 5 հրա որպիսի հանգամանքը հավաստված է՝ կատարողական վարույթը կարճելու մասին հար կատարողի՝ 23.03.2005թ. որոշմամբ, որը Ս. Սարգսյանին է հանձնվել՝ 24.03.2005թ.-ին, նույն տրվել է նրա աշխատանքից ազատման հրամանը: Նման պայմաններում, 2005թ.-ի մարտի 1-ի աշխատանքի չներկայանալու՝ գործաւթության համար Ս. Սարգսյանին աշխատանքից ազա դատարանի գնահատմամբ հիմնավոր չէ:

Իրավահարաբերության պահին գործող՝ նախկին ԳԳ աշխատանքային օրենսգրքի (այ օրենսգիրք) 38 հոդվածի համաձայն՝ առանց կազմակերպության արհմիութենական կա համաձայնության, կազմակերպության ադմինիստրացիայի նախաձեռնությամբ աշխատա պայմանագրի լուծում չի թույլատրվում:

Դպրոցի տնօրենի՝ 24.03.2005թ.-ի թիվ 6 հրամանի հիմք է հանդիսացել նաև ա 24.03.2005թ.-ի որոշումը՝ Ս. Սարգսյանին աշխատանքից ազատելուն համաձայնություն տալու:

Դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Դպրոցը 24.03.2005թ. ունեցել օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած արհեսա կազմակերպություն, վերոհիշյալ որոշումն ընդունվել է Դպրոցի որոշ աշխատողների կողմ իրենց համարել են արհկոմի անդամներ: Հետևաբար այդ որոշումն իրավաբանական ուժ

կարող հիմք հանդիսանալ Ղպրոցի տնօրենի՝ 24.03.2005թ.-ի թիվ 6 հրամանի համար: Այսինքն, նշված հրամանը չի համապատասխանում Օրենսգրքի 38 հոդվածի պահանջին:

Ղպրոցի տնօրենի՝ 24.03.2005թ.-ի թիվ 6 հրամանը չի համապատասխանում նաև Օրենսգրքի 42.2 հոդվածի պահանջին, ըստ որի՝ առաջիկա ազատման մասին աշխատողներն անհատապես՝ մախագորչացվում են ոչ ուշ, քան երկու ամիս առաջ:

Օրենսգրքի 239 հոդվածի համաձայն՝ առանց օրինական հիմքի աշխատանքից արձակվելու դեպքում բանվորը կամ ծառայողը պետք է վերականգնվի նախկին աշխատանքում:

Օրենսգրքի 240 հոդվածի համաձայն՝ աշխատանքից անօրինական կերպով արձակված և նախկին աշխատանքում վերականգնված բանվորին կամ ծառայողին դատարանի որոշմամբ հարկադրական պարապուրդի ժամանակի համար վճարվում է միջին վաստակը՝ արձակման օրից հաշված, քայց ոչ ավելի, քան երեք ամսվա համար:

Ղպրոցի տնօրենի՝ 26.04.2006թ. տեղեկանքի համաձայն՝ Ս. Սարգսյանի ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 18.03.2005թ.-ի թիվ 5 հրամանին համապատասխան ունեցած դասաժամերի հաշվարկով կազմում է 28 791 դրամ:

ԴՅ օրենսդրությամբ սահմանված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների պահումների կիրառմամբ Ս. Սարգսյանի ամսական առձեռն ստանալիք աշխատավարձը կկազմի 27 048 դրամ, երեք ամսվա համար՝ 81 144 դրամ:

«Պատասխանողի՝ 25.02.2005թ. թիվ 2 և 18.03.2005թ. թիվ 5 հրամաններն անվավեր ճանաչելու, պատասխանողին՝ իր կողմից 18.03.2005թ. արձակած հրամանին օրինական ձևակերպում տալուն պարտադրելու վերաբերյալ հայցվորի պահանջները դատարանը հիմնավոր չի համարում, քանի որ 18.03.2005թ. թիվ 5 հրամանը տրվել է ի լրումն 25.02.2005թ. թիվ 2 հրամանի և այն հիմք է հանդիսացել հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթը կարճելու համար: Հայցվոր՝ Ս. Սարգսյանը դիմել է դատարան՝ հարկադիր կատարողի՝ 23.03.2005թ. որոշումն անվավեր ճանաչելու հայցով: ԴՅ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ 2005թ. դեկտեմբերի 19-ի վճռով հայցը մերժվել է: ԴՅ վճռաբեկ դատարանի՝ 2006թ. փետրվարի 10-ի որոշմամբ նշված վճիռը մտել է օրինական ուժի մեջ: Հիշյալ վճռով հիմնավորված է համարվել հարկադիր կատարողի՝ 23.03.2005թ. որոշումը կատարողական վարույթը կարճելու մասին: ԴՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԴՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով դատարանը

Վ Ճ Ո Ւ Ց

Սուսաննա Արամայիսի Սարգսյանի հայցն ընդդեմ՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի N 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Վանաձորի թիվ 8 միջնակարգ դպրոց)՝ «Պատասխանողի՝ 25.02.2005թ. թիվ 2, 18.03.2005թ. թիվ 5 և 24.03.2005թ. թիվ 6 հրամաններն անվավեր ճանաչելու, պատասխանողին՝ իր կողմից 18.03.2005թ. արձակած հրամանին օրինական ձևակերպում տալուն պարտադրելու, ինձ իմ նախկին կամ համարժեք այլ աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարի պահանջի մասին», բավարարել մասնակի:

7
ՄԱՍԿԱՆՈՒՄ ԳԵՏԱՐԱՆ
136
Գ.թ.

Մասնաճյուղի Աստղայանի վերականգնել իր նախկին աշխատանքում Վանաձորի թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրենի՝ 2005թ. մարտի 18-ի թիվ 5 հրամանին համապատասխան:

Վանաձորի թիվ 8 միջնակարգ դպրոցից հոգուտ Սուսաննա Արամայիսի Աստղայանի բռնագանձել 81 144 (ութւունմեկ հազար հարյուր քառասունչորս) դրամ, որպես հարկադիր պարապուրդի հետևանքով վերջինիս կրած երեք անսվա վնասի հատուցում:

Պատասխանողի՝ 25.02.2005թ. թիվ 2 և 18.03.2005թ. թիվ 5 հրամաններն անվավեր ճանաչելու պատասխանողին՝ իր կողմից 18.03.2005թ. արձակած հրամանին օրինական ձևակերպում տալուն պարտադրելու պահանջների մասով հայցը մերժել:

Վանաձորի թիվ 8 միջնակարգ դպրոցից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 1 623 (հազար վեց հարյուր քսաներեք) դրամ, որպես պետական տուրքի գումար:

Վճիռը կանոնի չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան՝ հրապարակվելու օրվանից տասնհինգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ



Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Վճիռը չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ

« 12 » Տեպրեբ 2006 թ.

ԴԱՏԱՎՈՐ



Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ